ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

16.07.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետի պաշտոնակատար Հ.Ավետիսյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Ա.Շահբազյանը - մարզպետի օգնական
Մ.Դալլաքյանը, Վ.Ջաղինյանը, Մ.Խեչումյանը, Մ.Սարգսյանը, Ն.Բարիկյանը, Է.Հախվերդյանը, Ա.Դեմիրչյանը, Գ.Բաղդասարյանը, Ա.Մալոյանը- մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/
2. **Այլ հարցեր**:

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ Ս.Մակարյանը, Մ.Դալլաքյանը, Վ.Ջաղինյանը, Ն.Բարիկյանը, Մ.Խեչումյանը, Է.Հախվերդյանը, Ա.Դեմիրչյանը, Գ.Բաղդասարյանը, Մ.Սարգսյանը ներկայացրեցին նախորդ ժամանակաշրջանում իրականացված աշխատանքների և տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ տեղեկատվություն:

2. Մարզպետի պաշտոնակատար Հ.Ավետիսյանը հանձնարարեց.

2.1 ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

1- օրյա ժամկետում Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժին ներկայացնել տեղեկատվություն մեկամսյա ժամկետում վերադասից ստացված հանձնարարականների կատարման և դիմումների ընթացքի վերաբերյալ:

2.2 ՀՀ Լոռու Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ն.Բարիկյանին՝

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության ուսումնական հաստատություններում առկա, չօգտագործվող կամ օգտագործման համար ոչ պիտանի, դուրս գրման ենթակա գույքի կամ շինանյութի տնօրինման, այլ հաստատությունների տրամադրման կամ օտարման հարցերի լուծման նպատակով հիմնավորված գրություն ներկայացնել ԿԳՄՍ նախարարին դիրքորոշում կամ կարծիք ստանալու նպատակով:

Recoverable Signature

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: Администратор **Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99